

342.729

U-58

1414

9

Ա Կ Օ Բ Ե Լ Ց Ի Ւ Ա

ԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՒ

ՄԻՍԻԹԻՒՆՆԵՐԻ

Ա.ԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳ. ԿՈՍՏ. ԱՊՐԻԼԵԱՆ

300

1605-U4

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ Օ. Ն. ԱՊԱՆԵԼԻՆԻ ՊՈԼԻ. 7.  
1907

(26)

1414  
CIO5 NOV 20  
01 MAR 2010

"Հյուշ" ի սահմանադրություն  
342729 ԿՎ  
300 4-58  
1605-04 ԱՊՐԵԼ 1916 թ.  
բանական  
բազմացություն  
19 220 դր.

ԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՐԱՌՈՒՅՈՒՆ  
ՀՀԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌԱԴՐԱՄ ԲՈՒԺԱԴՐԱՄ  
7/11-1922  
Ա. ԱՅԱԽՈՎԻ ԱՆԱՀԻԿ  
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԴԻՆ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ



ԹԻՖԼԻՍ  
ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱԼԱՆԱՆԻ ՊՈԼԻ. 7.  
1907 (26)

1003  
1939

05 NOV 2013  
ՕՐԸ ԽԱՐԴ 10

29. 309

Հայոց և մահմանական նախագծեաւ ձևադիր պատրաստած հայոց և անառաջական աշխատավորական անհրաժեշտութիւնն է, որից դուրս հնարաւոր չէ իրականացնել պետութեան սահմանադրական սկզբունքները, իսկ անծի ազատութիւնը ամենից առաջ ինքնագործունեութեան ազատութիւնն է և այդ բանը լիակատար արագայաւում է ժողովների և միութիւնների ազատութիւնով։ Հետեւապէս սահմանադրական պետութեան իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք պէտք է ունենայ ազատ ձայն բարձրայնելու, քննութեան առնելու և պաշտպանելու իւր կարիքները ու շահները, և բոլոր քաղաքացիներին էլ պէտք է արուած լինի իրաւունք փոխագարծ համաձայնութեամբ միանալու միութիւն կազմելու, որպէս զի կարողանան միացեալ ոյժերով հասնել, այն նպատակներին, որը մի անհատի ոյժից վերէ։

Ժողովների քաղաքական նշանակութիւնը, որ կենդանի խօսքով կռու ելու հնարաւորութիւնն է տալիս, անտարտիքս ահազին է։ Ինչպէս ապազրական մամուլի գիւտից սկսած ոչ մի խոշոր քաղաքական դէսք չի եղել որ իրագործուած չը լինէր առանց մամուլի ճամակցութեան, նոյնպէս վերջին դարերում մասնաւունք 18—րդ դարուց սկսած, մամուլի ահազին հասարակական ազգեցութեան չափ նշանակու-

ութիւն են ստանում նաև հրապարակական ժողովներ:

Պատոփօրման, այդ տերմինի տակ հասկանալով քաղաքական ամենատեսակ ճառեր, որ արտասանում են հասարակական ժողովների մէջ՝ ժողովրդի կարիքների և շահերի տմենալաւ նպատակայարմար արտայատող միջոցներ: Այդ տեսակիտով մամուլ և միտինդներ, հասարակական կարծիքի այդ երկու գործոնները, փոխարքարձաբար լրացնում և օգնում են մէկ մէկու: Երբեմն մամուլը բարձրացնում է զանազան հարթական հարցեր, որոնք առիթ են զառնում միտինդներում եռանցուն վիճաբանութիւնների, երբեմն էլ ընդհակառակն միտինդներին է պատկանում հարցեր բարձրացնելու նախաձեռնութիւնը, որ յետոյ գառնում է մամուլի էշերում գործնական դատողութեան տուարկան: Զանազան հարցերի լուծման տեսակէտից երբեմն միտինդին առելի մեծ նշանակութիւն են առիս քան թէ մամուլին, նրա համար որ նա առելի անմիջական համոզիչ ազգեցութիւն է ունենում հասարակութեան ցանկութիւնների և աշխարհայեցողութիւնների վերաց: Մամուլի խօսքի ոյժը երրեք չէ կարելի համեմատել կենդանի խօսքի ոյժին հետ, որը արտասանում է տաղանդաւոր հուետորը, ու ողեռում ունինդիրներին այս կամ ան զաղափարով:

Ժողովների քաղաքական դերը, անմիջական կապ ունի ժողովրդական ներկայացուցչութեան բարգաւաճան հետ և նպաստում է նրա անհրաժեշտ լրացման:

Հրապարակական ժողովը ներկայանում է այն նախադարասական հարցարննութիւն, որին ենթարկում է ժողովուրդը իւր ներկայեացուցչին նրան իրաւ լիազօրութիւն տալուց առաջ: Ընտրողները տալիս են իրանց ծավոր թեկնածուներից նրան, որի ծրագիրը աւելի համապատասխան է իրանց կարիքներին և ծդառնուներին և որին կարելի է ապահով կերպով յանձնել իրանց շահերի պաշտպանութիւնը:

Նոյնպէս և հրապարակական ժողովը ներկայանում է գարձեալ միւնոյն տեղը, որտեղ ժողովրդի ներկայացուցիչը, իւր գործունէութեան հաշիւ է տալիս իւր ընտրադներին:

Վերստողելով իրանց ներկայացուցիչներին և ենթարկելով իրանց ազգեցութեանը, ժողովուրդը հէնց դրանով ունենում է պարլամենտի գործունէութեան վրայ մշտական հսկողութիւն, հետևաուգեն և ամբողջ կառավարութեան կազմի վրայ, որի ոչքը հանդիսում երկրի վասահութեան վրայ և այդ վասահութեան չափը որոշելու ժամանակ իսկապէս խոշոր դէր են խաղում ժողովրդական միտինդները:

Միտինդը ինչպէս ամենպատ միջոց, որով հասարակութեան լայն խաւերը կարողանում են արաւացանել և կուտղատել իւրեանց կարիքներ և ցանկութիւնները, սերտ կապ ունի գէմօկրաափական շարժման առաջադիմութեան հետ և ներկայանում է իրու ամենաուժեղ գէնք հասարակութեան ննշուած զաղափերին իրաւունք գեռք բերելու կոռուք գործի մէջ:

Հասարակութեան ընդհանուր ուշտղութիւնը գործնելով ժողովրդի այս կամ այն անհետածգելի կարիքի վրայ, տալով նրան հնարաւորութիւն արաւակայակու աց կարիքի մասին և նրան բազմակողմանի քննելու, հասարակական ժողովը հէնց դրանով տալիք է առաջարկուելիք նիւթը օրէնսդրական ժողովին կառավարութիւնը հնարաւորութիւն է ստանում կանոնաւոր կերպով քննել ժողովրդի կարիքները և գրահամեմատ ուղղել իւր գործունէութիւնը այս կամ այն կողմք։ Առանձնապէս մեծ է միտինգների նշանակութիւնը երբ կազմակերպում է ժողովրդի այն շրջաններում, որոնք օրէնսդրական ժողովում կամ բոլոր լին չեն ներկայացուած կամ եթէ ներկայացուած են շատ թոյլ կերպով։

Այս հանգամանքում միտինգները դառնում են ժողովրական ներկայացուցչութեան դերի ընդլայնման մի միջոց։

„Ամենանշանաւոր և կենաւնակ հարցերը պարլամենտից դուրս են քննւում“։ ասում է Զեֆոսնը, Անգլիայում իշխող քաղաքական միտինգների նշանակութեան առթիւ, — „և մեծ մասամբ ստանում են բոլորովին վերջնական ու որոշ վճիռ, նախ քան պարլամենտ անցնելը, օրէնսդրական և կատարողական նպատակների համար։ Պլատֆորմի ձափնը, երբ նա պայքար է մզում որևէ հարցի համար, հնչում է այնպէս զօրեղ և շարունակաբար, որ պարլամենտի ընդդիմախօսները չեն կարող արդարէս լինել“։

Ժողովը, որտեղ ժողովուրդը բողոքում է իւր կարիքների մասին զրեթէ նման է ծանրաչափի, որ ցոյց է տալիս հասարակական մթնոլորափ դրութիւնը Բայց որպէս զի այդ ծանրաչափը, յաջող կատարի իւր նշանակութիւնը, նա պիափ լինի աղատ ամեն իւսակ կողմանակի ազգեցութիւնից, այն ժամանակ և միայն այն ժամանակ նա կրդառնայ ժողովրդի քաքատիան զաստիարակութեան և կառավարութեան ժողովրդի հետ ունեցած անհամաձայնութիւնների առաջն առնելու համար, լաւագոյն միջոց։

Միութեան այն պահանջը, որ զրգում է մարդկանց իրանց կարիքների մասին միահմուռ դատելու համաձայնութեան գալ, սահմում է նոյտ միւս կողմից միանալու աւելի մշտական կազմակերպութեան, այն է զանազան տեսակ ընկերութիւնների և միութիւնների ձեւերով, որոնք ձգտում են այս կամ այն կուտարական նպատակի։

Տալով միջոց արագ և կատարելապէս իրականացնելու միայեալ ոյժերով այն կուլտուրական նպատակը, որ կարելի է թէ անհնարին լիներ իրականացնել առանձին տնհասների բաժան բաժտն շանքերով, ալսպիտով միութիւնը ներկայացնում է առաջադիմութեան ամենառութեղ ֆակտորներից մէկը։ Միութիւնները, պիտի գտնան հասարակական կետնքի բնական ձեւեր. և այն ժամանակ նրանք կրինեն հզօր զէնքո, ժողովրդի առաջադիմութեան և նիւթական ու մտաւոր պահանջների բաւարարութիւն ստա-

նալու գործում։ Այն նպատակները որոնց համար մարդիկ միութիւն են կազմում, նոյնքան զանազան աեսակ են, որբան և մարդկութեան կուլուրական նպատակները ընդհանրապէս։ Գորութիւն ունեն միութիւններ և բարեգործական, զիտական ու զեղարուեստական ընկերութիւններ, զանազան արդիւնաբերական նախաձեռնող ընկերութիւններ, փոխագարձ օգնութեան և արհեստական միութիւններ, որոնք այնքան մեծ դեր են խաղում բանուրական շարժման պատմութեան մէջ և վերջապէս քաղաքական միութիւններ։ Վերջիններս առանձնապէս իրանց փրայ են զբաւում կառավարութիւնների ուշադրութիւնը, վարուելով նոյց հեա որպէս քաղաքական խոշոր ոչժերի հետ, որը կարող է գործադրուել այն նպատակների համար, որ փանգաւոր կը լինի ժողովրդին։ Կառավարութիւնը նրանց վերաբերմամբ իրան է վերապահում վերասուզողի իրաւունքը, որի ձևերը զանազան դարաշրջաններում և զանազան պետութիւնների մէջ բոլորովին միատեսակ չկին։

Քաղաքացինների կազմակերպած միութիւնները այս կամ այն նպատակով գորութիւն ունեցած են բոլոր ժողովրդների մէջ և ամեն ժամանակ։ Բացարձակ միահեծան իշխանութեան ծաղկած զարաշրջանում պետական իշխանութիւնը, աւեսնելով ժողովրդի հնքնագործունեութիւնը իրեք մի փոնագաւոր թշնամին, ոչ մի միջոցի առաջ կանգ չառաւ, որպէս զի կարողացածի չափ սահմանափակէր միութիւնների ազա-

տութիւնը և հռովմէական կայսրութեան ժամանակից սկսած մշակեց վերջիններին նկատմամբ այն սկզբունքը, որի գորութեամբ ոչ մի ընկերութիւն, խիստ պատժի սպառնալիքով, չեր կարող հիմնուել առանց կառավարութեան թոլլտուութեան։

Սրաօնեոյ միութիւնների սխառեմը, գտաւ իրահամար պարարտ հող արևեմուա-եւրոպական բոլոր թագաւորութիւնների մէջ և XIX. դարում, գեճօկրատիական իդէանների յաղթնակելով, աւելի կամ պակաս խամառ կրիւներից յետոյ, աւելի առւեց յայտարարական սխառեմին \*). Իսկ ինչ վերաբերում է հասարակական ժողովներին, այդ ինչպէս յայսնի նրանք գորութիւն ունեին ամեն ժողովրդների մէջ և գեռ ևս մարդկութեան հնագոյն գարաշրջանների ժամանակ, այն ամեն աեղ որտեղ ժողովուրզը մասնակցում էր քաղաքական կեանքին. բայց ժամանակի լնթացքում, բացարձակ միահեծանութեան ուժեղանալու հետ, հասարակական ժողովների գերը աստիճանաբար նուազում են, իսկ մի քանի թագաւորութիւնների մէջ նրանք բոլորովին վերանում են մինչև, XVIII. դարը, երբ ազատութեան սկզբունքները նորից արիւն և մարմին առան, երբ հասարակութեան ստորին դասակարդերում առաջ եկաւ իրա քաղաքական իրաւագրկութեան զիտակցութիւնը

\*) Այսինքն փոխանակ նախապէս խնդրելու ընկերութիւններ հիմնելու իրաւունքը, առաջ հիմնումը և յետոյ միայն յայտնում է կառավարութեան։

և սկսեց հասսունանալ, այդպիսի էրաւագուրք դրութիւնից անպայման դուրս գալու համոզմունքը:

Ժողովների աղատութիւնը փայփայող Երկիրն եղաւ Անգլիան, որը ուրիշ կառավառութիւններից կանուխ գիտեցաւ օգտուել միտինդներից և սլատֆորմայից, ճնշումն զործ դնելու պետական իշխանութեան վրայ, յօդուա ժողովրդական բազմութեան:

Միտինդների Երկարումը Անգլիայում սերտ կապ ուներ անգլիական հաղատակիների վաղեմի որբուզանիրաւունքների հետ, այսինքն պետիցիա տալու իրաւունքին: Պետիցիայի իրաւունքը որ վերջնականութեան հաստատուած է 1689 թուին այսպէս կոչուած „Բիլի Իրաւունք“ \*)-ից Անգլիայում տարածուած է ամենալայն չափերով: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ ոչ մի ձանրակշիռ օրէնսդրական հարց չէ լուծուած այնտեղ, առանց աղջարնակութեան նշանաւոր բազմութեան մասնակցութեանը, որոնք իրանց ցանկութիւններն առաջարկուած են պետիցիայի ձևով: Թէ որչափ լայն կերպով են օգտուած Անգլիացիները իրանց իրաւունքներից արդ ցուց են տալիս պետիցիաների թուանշանները, որոնք ստացել են պալատուած ամեն մի:

\*) Գրաւոր առաջարկութիւն Անգլ. պարլամենտին նոր օրէնք հրատարակելու կամ մի որևէ նոր կարդագրութիւն անելու համար: Ծան. թ.

հնդամեակին. օրինակի համար 1839 թուից մինչ 1843 թ. տուած է 94,000 պետիցա. 1844—1848 թ. 66,500 պ. 1849—1853 թ.—54,900 պ. 1854—1858 թ. 47,600 պ. 1870 թ. պալատին ներկայացրուած էր 46,000 պետիցիա 2 միլիոն ստորագրութեամբ, 1861 թ. 120,000 պետ. 18,049,161 ստորագրութիւնով.

Սկսած XVIII-րդ դարի Երկրորդ կիսից պետիցիաների տալը ներկայանուած է որպէս հեաւանք տուելի կամ պակաս բաղմամարդ միտինդների, որոնք հաւաքուած էին քաղաքական որեւէ այս կամ այն դէմքե՛ առէթով, որը յուղուած էր Երկրի հասարակական կարծիքը: Տարցի հրապարակական քննութիւնը, որը առէթ էր տալիս միտինդը կաղմակերպելու, առաջնորդուած էր այս կամ այն եղբակացութեան և արտադրանուած էր պետիցիայի ձեռով ուղղուած համանքի պալատին:

Նախընտրական ժողովներ, նոյնպէս արձարձուած էին միտինդների սովորութիւնը: Նրան օժանդակուու էր իւր կարգին և այն կրօնական ընդհանուր շարժուածը, որ տեղի ունեցաւ Անգլիայում XVIII դարի առաջին կիսուած և առաջ բերեց մետողիստների աղանդի հիմնուելը:

Այդ շարժման զուղբնթաց էին բազմաթիւ ժողովներ, որոնք արձարձուած էին ներկայ եղողների մէջ հանրութեան շահերի դիտակցութիւնը և հանդիսա-

յաւ որպէս անհերքելի պարզ ապացոյց նմանօրինակ ժողովների մեծադոյն ոչի ազգեցութիւններին ժողովրդական բաղմութեան վրայ:

1760 թուին գահը նստեց Գէորգ III-րդը, որի Երկարամեայ թագաւորութեան ժամանակ շատ փորձեր եղան թուացնելու տպատակը հպատակների ազատակամութիւնը և ուժեղացնելու թագաւորական իշխանութեան հեղինակութիւնը:

Նրա օրով Անդիան անցաւ այն ճգնաժամից, որը սպառնում էր շատել նրա քաղաքական կազմը, բայց հասարակական ինքնազիտակցութիւնը այնքան հասունացած էր այն ժամանակ, որ համարձակ դուրս եկաւ իր շահերի պաշտպանութեան համար ըէակցիակի զէմ: Ամենաուժեղ զէնքը ազատութեան կոռուի համար կառավարութեան մնջումների զէմ, մամուլին հաւասար երևեցան նաև միախնդներն և միութիւններն: Այդ կոռուի պատմութիւնն է միանդաման և պատմութիւն անզիացոց կոխների, ժողովների և միութիւնների ազատութեանը, և այդ պատճառով մենք կառնենք զրա վերաց մի փոքր մահքամասնօրէն:

Միախնդներ կազմելու առաջին առիթներից մէկը եղաւ սիլլի (ճրգողի) վրայ հարկ դնելու „Բիլլը“ որը մացրել էր 1763 թուին Անդիացոց պարլամենտ Պիտոֆ լաջորդ - Կոմս Բիւալը: Հարկային ծանրաբեռնութեան մեծանալու հետ, այդ հարկը առջիս էր իրաւունք ակցիզակին աստիճանաւորին անհստիր

օրուայ և գիշերուայ ամեն ժամերին մանել տները, որուել կարող էր պատրաստուել սիդր, խուզարկութիւն կատարելու համար, հէնց սորտնով խախտում էր բնակարանի անձեռնմիւթիւնը, որին Անդիլիսցին սովորել էր համարելի իւր անկողովակի իրաւունքը: Երբ այդ „Բիլլը“ ստացաւ օրէնքի ոյժ, երկիրը բոլոնիուեցաւ սասակի յուղումով. Ժողովուրդը իր սրակ մաղձր դուրս ժամփեց մի շարք ժողովների մէջ, և ամեն տեղ միևնույն տեսակ վճիռ էին արձակում-վերացնել այդ ատելի օրէնքը-և այդ պետիցիալի ձերգ ուղարկուեց համազանքի պալատը: 1766 թուին սիլլի վրայ զրած օրէնքն ու հարկը վերացուեց:

Վերոիշեալ զէալքից մի քանի տարի յետոյ տեղի ունեցաւ մի միջնադէպ, պալատի համար Միլլըսեկի շշանի պատղամաւոր Զօն-Վիլքսի ընարութեան պատճառաւ. նա հեռացուեցաւ պարագայոց նրա համար որ զրել էր „վիրաւրական և յուզիչ պարաւագիր (պասկուիլ)“ (բայց խստավէս, թագաւորի գանհական հասուի բնագաւառութեան համար էր, որը մինչև անգամ, զեռ չէր էլ տպուած, սակայն գողացուել էր նրա տնից մինիստրներից մկի թէլազըրութեամբ): Մինիստրների գործունէութեան և նրան հնագանդ պալատի զէմ դուրս ժամփեց բոլոք մի շարք բարգամարդ միախնդներում, կազմուեցան պետիցիաներ, որի տակ ստորագրեցին աւելի քան 65,000 ընարողներ—մի մեծաքանակ թիւ, եթէ ինկատի ունենանք այն ժողովակի ընտրողների թուի փոքրամասնութիւնը:

Համայնքի պալատում այդ առթիւ առաջացաւ լամառ պայքար կառավարութեան կողմնակիցների և ընդդիմադիր կուսակցութեան մէջ՝ բայց բանից գուրս եկաւ որ առաջիններ մեծամասնութիւն էին կազմում: Բայց և այնպէս Միզրլսեկի ընտրութեան կուսում ժողովուրդը վերջնականապէս յաղթող դուրս եկաւ: Երբ հեակեալ ընտրութեանը, այն է 1774 թուին Վիլքս նորից ընտրումէ Միզրլսեկից, թագաւորը և կառավարութիւնը, աչքի առաջ ունենալով անցեալի փորձը և չըկամենալով առաջ ըերել նոր խլրամունքներ, առաջարկեցին նրան հանդիսարունել համայնքի պալատում իւր տեղը:

Այս հասարակական կարծիքի խոշոր յաղթանակն էր, որի արաւաբախիչն էր հանդիսանում ժողովրդական միտինզը: Վերջինս դառնում էր այդ ժամանակից Երկրի քաղաքական կեանքի աշքի ընկնող ֆակտօրը: Այն օրից պետական գործիչների համար դառնում է հասկանալի իրողութիւն, որ իրանց քաղաքականութիւնը և գործունէութիւնը ենթարկվում է հասարակական դատողութեանն և քննութեան, ժողովրդի քաւական մեծ համախմբումի ներկայութեամբ:

Հենց այդ դարաշրջանին՝ որ ստեղծեց միտինզը, ինչպէս զէնք քաղաքական կոիւների՝ պատկանում է և միւս քաղաքական հմմարկութեան առաջանալը, որը սերտ կապ ունի առաջինի՝ հեաւ և դա է միութիւնը: Միտինզն որպէս պատահանով վերցուեցած մասնակիցների ընկերութիւնը կուտել պարզամենում ժողովրդի հաւասար ներկայացուցութիւն ունենալու համար: ԱՄԱՆԱՊՐԱԿԱՆ

բուժն մարդկանց, ողեռորուած միւնոյն ընդհանուր նպատակով, չէր կարող չըլդանալ մի աւելի ամուր համաժողովի անհրաժեշտութիւնը, որը արտադարտուեցաւ կազմակերպուած միութիւնների ծեռով: Քաղաքական բնաւորութիւն ունեցող միութիւններից առաջինն եղաւ «Իրաւունքի Բիլի պաշտպանող ընկերութիւնը»: (Society for supporting the Bill of Rights):

1787 թուին երեսում է նոր ընկերութիւն, որ իրա նպատակ է զնում վերացնել գերեվաճառութիւնը: Այդ ընկերութիւնը միացրեց իւր հետ բոլոր գասակարգերի ներկայացուցիչներին, առանց խարութեան քաղաքական և կրօնական համոզունքների: Նրա զլուխ անցան ամենքից աւելի խելացի և զարգացած ժամանակակից գործիչները: Պրօպագանդան տնտօւմ էր մամուլի, միտինզների և պարլամենտական պետիցիաների օգնութեամբ: 20 ապրուց յետոյ իրանց նպատակին հասան և 1807 թուին գերեվաճառութիւնը օրէնսդրական հանապահով վերացուեցաւ:

XVIII դարի վերջը հիմնուեցան դարձեալ մի քանի քաղաքական միութիւններ որոնք ահապին նշանակութիւն ունեին, զրանք էին «Լոնդոնի թղթակիցների ընկերութիւնը» (London Corresponding society) որ կազմուեց 1791 թուի վերջում, նրա նպատակն էր կոուել պարզամենում ժողովրդի հաւասար ներկայացուցութիւն ունենալու համար: ԱՄԱՆԱՊՐԱԿԱՆ

գիտութիւններ ասարածող ընկերութիւնը» (Society for pronoting Constitutional Information) որի պահանջ հոգտն էր ասարածել ժողովրդի մէջ քաղաքական զանազան հարցերի վերաբերեալ գրուած դրեւր և բրօշիւրներ:

1792 թուի սկզբում սկսեց դորձել գարձեալ մի մ.ծ նոր ընկերութիւն—«Ժողովրդի բարեկամներ անունով» (Society of the Friends of the People) ողդ ընկերութեան նպատակն էր պաշտպանել սահմանադրական բարենորոգութեան և կոռել դոյութիւն ունեցող ժողովրդական ներկայացուցչութեան կարգերի թերութիւնների դէմ:

Սլդ ընկերութիւնները դորձում էին նախ բրօշիւրներ և թուոցիներ տարածելու միջոցով, որոնք ծշակում էին նեղ շրջաններում, դրանից յետոյ պրորլամենտին ներկայացուեց մի շարք պետիքիաններ, որոնցով պահանջում էին ընարարական իրաւունքների բարենորոգութիւնը: Սակայն այնուամենայնիւ համայնքների պարատում բարենորոգութեանների կողմնակիցները հանդիսացան միայն աննշան փոքրամասնութիւն և ակնյալանի կերպով պարզուեցաւ, որ այս տեսակէտից պարլամենտի վրայ յոյս գնել անհնարին է, այլ թէ գործի յաջողութիւնը կախուած կը լինի միմիւսն հասարակաց կարծիքի ոյժից և համերաշխութիւնից:

Սլդ համզմունքի արդիւնք եղաւ առաջին հասարակական բացօթեայ միահնդի գումարուիլը (1793 թ. Հոկտեմբերի 15) իսկ կէս տարուց յետոյ տեղի ունեցաւ երկրորդ նոյն

տեսակի միտինդր: Սլդ միախնդիրը անցրան թուութիւն-կելի կարգավահութեամբ և շուաց տարածութիւն շատ գաւառներ: Եեֆֆելդի միախնդրում իմիշի այլոց ընդունուած էր բանաձև այն բանի համար „որ ժողովուրդը ուշաք է պահանջէ ընդհանուր ներկայացուցչութիւն որպէս իրաւունք և ոչ թէ խնդրի որպէս ողդութութիւն“:

Այլ և հանդերձ այսու այն ժամանակ ֆրանսիայում տեղի ունեցած անցրելը չէին կարող չաղել Անդիսական կառավարութեան վրայ, որը վախենալով Անդիսակի յեղափոխութեամբ փարակուելուց, առանձին տաղմանով հետապնդում էր ժողովրդական աճող շարժումների վերայ և վերչի վերջոյ ճնշելու համար միառուց դիմել կարուկ միջոցների:

1794 թ. Մայիսին Պիտար առաջարկեց դադարեցնելու „Mabeas Corpus Acta“-ի գործունեութիւնը որը իր բովանդակութեամբ դաւանանող և դպուելի դաւաղը ունեցող օրէնքներն ու սահմանութիւնները: Սլդ առաջարկութիւնը որը աչքի առաջ ուներ զիսաւորապէս ճնշել քաղաքական ժողովների և միտիւնների գործունեութիւնը, առաջ բերեց ուժեղ ընդդիմալբութիւն Ֆօկսի կողմից, որը բնորոշեց նրա առաջարկութիւնը այսպէս „տալ գործադիք մարմնին բացարձակ միահնեման իշխանութիւն թաղաւորութեան մէջ, առևել միաւանձին անհնական աղասաւութեան վերայ.“ և զուրս եկաւ պաշտպանելու քաղաքական



հարցերի պատքնակատելու իրաւունքները, այդ „ամեն մի հայաստիկի կենսական և արդիւնաբեր իրաւունքը“։ Հաւագոյն երաշխատորութիւն, վարչութեան հաստատութեան համար», ասում էր նա, «զրուած է ժողովրդի պարզամենափ ճշտական և արթուն վերստուգութեան վրայ, և այդ պատճառով հասարակական այն միտինդները որը լինում են քաղաքական հարցերի քննութեան համար պէտք է համարել ոչ միայն օրինական այլ և զովութեան արժանի»։

Սակայն չը նայեած Ֆօկսի եռանդուն պաշտպանութեան, բիլլը, որ գաղարեցնում էր մինչ 1-ն Փետրվարի 1795 թ. անձնական պատութեան անձեռնմխելութեան գործունէութիւնը, ընդունելի եղաւ և գործադրուեցաւ ժողովուրդի վրայ խիստ գաժանութեամբ։

Դադարեցման ժամանակամիջոցը, լրանալուց յետոյ համայնքի պալատը վճռեց երկարացնել միջոցը դարձեալ 5 ամսով։ Այն ինչ այդ ժամանակամիջոցն ևս լրացաւ, արտակարգ միջոցների շնորհիւ, ճնշուած շարժումը, նորից սկսեց կենդանանալ. մէկը միւսի յետեց կազմուեց բազմամարդ բացօթեայ երկու միտինդ, որտեղ խմբագրուեց մի կոչ ժողովրդին և մի ուղերձ թագաւորին։ Այդ կոչը ժողովրդին հրաւիրում էր պնդել իր բնական և անհերքելի իրաւունքների վերայ-այն է ընդհանուր ձախատուութիւնը և տարեկան պարյամենաները։ Թագաւորին առաջ ուղերձով պահանջում էր պատերազմի վե-

բացումը, մինիստրների վոփիոխում և ընդհանուր ընտրողական իրաւունքը։ Երկրի յուղումը շարունակ սաստիսնում էր։

Այն քարը որ կոտրեց պարլամենտ գնացող թագաւորի կառքի լուսամուտը, մինիստրութեան առիթ տուեց հրատարակելու մի ազդ «հակաօրինական և ապատամբական ժողովների գէմ»), և ապա որոշեցին ծեռք առնել երկու բացառիկ միջոցներ։ Այդ բիլլից մէկը բովանդակում էր իւր մէջ թագաւորի անձնական պաշտպանութեան միջոցները, իսկ միւսը ուղղուած էր միտինդների գէմ։ Այդ բիլի գորութեան հիման վերայ այն միտինդը, որ կաղմուած էր լիներ առելի քան 50 հոգուց, չէր կարող գումարուել առանց տեղական իշխանութեան նախնական թույլատութեան։

Աղմինիստրացիալի ներկայացուցիչներ կարող էին աղատութիւնից զրկել այն ամենին, որոնք չէին կատարի օրէնքի պահանջը և իրաւունք ունեին ուժով փակելու այն դէպքում, երբ նա աղմկալի բնոյթ ստանար և միանդաման նրանք աղատ էին ամեն պատասխանատութիւնից, եթէ որ միտինդը ցրիւտայիս մէկը սպանուեր։

Բիլլը սահմանեց նոյնպէս խիստ հակողութիւն քաղաքական ընկերութիւնների վերայ։ Այդ կարգադրութիւնը սահմանուեցաւ երեք տարով։

Այդ բիլլը երկրի մէջ առաջ բերեց ուժեղ զիմագրութիւն և վեց շաբաթուայ ընթացքում ամեն տեղ սկսեցին կազմուել բողոքի միտինդներ և արւում

Էին պղեախցիաներ: Այսու համդերձ մինհատրների մեծամասնութիւնը պարզամենտում չաղթանակեց և բելլը գործադրուեց:

1799 թ. բայց նրանից հրատարակուեց լատուէ օրէնք ընկերութիւնների վերաբերեալ, որի հիման վրայ գորութիւն ունեցող բոլոր քաղաքական միութիւնները յալտարարուեցին հակաօրինական, իսկ նոր ընկերութիւնների հիմնելը իրավէս դարձել էր անկարելի:

Կառավարութեան բէտակցիօններական քաղս քանանութիւնը պահեց իւր ոյժը ամբողջ 25 տարին Բայց չընալի բացառիկ օրէնքների և անծնական տնօւնանմխելութեան երաշխաւորութեան վերացմանը, ժողովուրդը չէր դադարում կոռուկուց կառավարչական կամայականութեանց դէմ, լւր ունեցած բոլոր միջոցներով։ Կառավարութիւնը ևս պատասխանում էր իւր կողմից ճնշումներով, որը միան գրգռում էր ժողովրդին և ուժեղացնում ընդիմադրութիւնը։ Առանձնապէս սաստիկ զայրովթ առաջացրեց երր միտինգներից մէկը (1819 թ. օդոստոսին) որ անցնում էր բոլորովին կարգապահութեամբ, հեծելազօրը ցրիտուած, որի հետեւանքը եղաւ 11 սպանուած և 500 վիրաւոր։

1825 թուին լրացյաւ վերջին ակտի գործողութեան ժամանակամիջոցը, որը սահմանվակել էր միտինգների և միութիւնների իրաւունքը և այդ ժամանակից այդ իրաւունքը աղատուեց ամեն տեսակ գոյու-

թիւն ունեցող ճնշումներից և ստացաւ հնարաւորութիւն անարգել զարգանալու և ցոյց տալու միջուկ կան ազգեցութիւն ամբողջ Անգլիայի ամեն շրջանների վրայ։

XIX-րդ դարու ընթացքում այսինքն 1832, 1867 և 1885 թուերին, պարլամենտուական երեք բարենորոգումներ եղան, որոնք զգայի կերպով ընդարձակեցին Անգլիացինների ընտրողական իրաւունքը և ուժեղապէս առաջ քաշեցին երկրի քաղաքական կազմի գեմօկրանակացումը։

Այդ բարենորոգումները ներկայանում էին որպէս հետեւանք հասարակական ինքնազործունէութեան, որը պրապարաւում էր միտինգներով և միութիւնների կազմակերպութիւնով։ Ոչ պակաս խոշոր գեր խաղաց ժողովրդի ինքնազործունէութիւնը այն շարժման մէջ, որով պահանջում էին հայրի օրէնքների վերացումը և ազատ առեւտրի սկզբունքի սահմանումը։ Նոյնը կարելի է ասել և այն բանուորական շարժման մասին, որ յայտնի էր չարտիստների անունով։

Այդ բոլոր շարժումների պատմութիւնը ծառայում է որպէս փայլուն ապացուց թէ որպիսի ուժեղ զէնք է ներկայանում ժողովրդի ընդարձակ բազմութեան ծեւքը միտինգներն ու քաղաքական միութիւնները, որոնց ճնշման շնորհիւ Անգլիայում իրականացան XIX րդ դարի բոլոր խոշոր բարենորոգումները։

Այս հարեւանցի նկարագրութիւնից պարզ երևում է որ Անգլիացինները ժողովների և միութիւն-

Ների աղասութեան հասան գեռ ևս ԽIX—րդ դարի սկզբներին, իսկ ինչ վերաբերում է մեր ժամանակակից Անդլիային, նրա օրէնսդրութեան մէջ, ժողովների վերաբերեալ չկայ և ոչ մի ցուցմունք:

Այդ իրաւունքը ինքնարերաբար բղխում է անձնական աղասութեան սկզբունքից: Ամեն մի Անդլիական քաղաքացի ունի աղատ իրաւունք մանդալու փողոցներում, կանգնելու և զրոյց անելու, այդ իրաւունքն ունին և տամանեակ ոչ հարիւրաւոր քաղաքացիներ, ախտեղից, ինչպէս ուղիղ հետեւութիւն բղխում է միտինդների աղասութիւնը:

Միւնո՞ն ժամանակ ոչ ոք իրաւունք չունի կարգը խանգարելու, այդ պատճառով ապօրինի (խոռվար) միտինդներ չեն թողարւում:

Ինչպիսի՞ միտինդ է համարւում Անդլիայում տպօրինի. գատաստանական փորձը արձանադրում է այդ տեսակները. 1) ամեն տեսակ միտինդ, որը խանգարում է հասարակական կարգը. 2) ամեն միտինդ որը սպառնում է խանգարել կարգը և 3) միտինդ որնոր կարող է երկապառակութիւն սերմանել բարի քաղաքացիների մէջ և որից կը նախատեսնուի փոանդի կարելիութիւն, հէնց իրանց համար: Երբ միտինդը ստանում է «հակաօրինական, աղմկալի խմբումի» ձև, ու ձգառում է բռնութիւն գործազրել կամ նոյն իսկ վերջինս իրազործւում է, տեղական իշխանութիւնը, հաշտարար գատաւորները, իրաւունք ունեն խմբուածներին առաջարկել ցրիւ դալու, դրա

հետ այն անձը, որը յայտնում է խմբուածներին, այսպիսի հրաւելը պէտք է կարգայ՝ յայտարարութեան ձևով, որը պէտք է ունենայ այսպիսի արտայայտութիւն: «Տէր թագաւորը հրամանում է և պատուիրում բոլոր հաւաքուածներին անմիջապէս ցրիւ գալ և վերադառնալ իրանց բնակարանները և գնալ իրանց դործին, հակառակ դէպքում կը պատժուին Գէորգ Առաջի թագաւորի գահակարութեան առաջին տարուայ օրէնքներով. Աստուած ողջ պահի թագաւորին:» Այդ յայտարարութեան ընթերցումից յետոյ երբ ներկայ եղողները չեն ցրիւ գալիս, այն դէպքում հաշտարար գատաւորը լիազօրութիւն ունի գիմելու զինուորական ոյժի: Ցրիւ տուած միտինդի յանցաւոր մասնակցողներին գատում են ոչ յատկապէս նրա համար կաղմած գատարաններում, այլ երգուեաների գատարանով:

Թէպէտ Անդլիայում միտինդների աղասութեան վերոիշեալ սահմանափակումները սահմանուած չեն օրէնքով, այլ գատաստանական փորձի հիման վրայ, բայց այդ բաւական էր, որպէս զի բոլորովին չնշուեր միտինդների իրաւունքը: Այդպէս պէտք է լիներ իւրաքանչիւր ցամաքալին պէտութեան մէջ: Բայց Անդլիայում մենք տեսնում ենք բոլորովին տարբեր, շնորհիւ գատարանի զբոյց գործունէութեան, որը առգրուած է անձնական աղասութեան յարգանքով, միտինդների աղասութիւնը սահմանափակում է միտիայն ծալրայեղ և հազուազիւտ պարագաներում: Եթէ

դառարանը չի հանաչի նպատակայարմար աղմինիս-  
արացիալի գործողութիւնը միախնդ արգելելու կամ  
ցրիւ ապու գործի մէջ, այն ժամանակ, վերջինիս վրայ  
է ընկնում պատասխանատութիւնը: Իբրև օրինակ կա-  
րելի է յիշել հետեւալ դէպքը: Փրկութեան բանակը  
վճռել էր հաւաքուելու միախնդի, տորան թշնամի մի ու-  
րիշ ընկերութիւն հրաւիրեց իւր անդամներին միախն-  
դի միենոն տեղը, ընդհարումն յառաջ բերելու պա-  
տրուակով: Աղմինիսարացիան արգելեց փրկութեան  
բանակին հաւաքուելու ու ցրիւ տուաւ նրա անդամ-  
ներին: Նրանցից մէկը գանդասուեց, գաստարանը  
վիրո կալացրեց և որոշեց այսպէս. որովհետեւ ամեն  
մի ընկերութեան անդամ իրաւունք ունի գնալ ցան-  
կալի տեղ, այդ պատճառով աղմինիսարացիան չը  
պիտի արգելը հանդիսանար միայն նրա համար որ  
միս ընկերութիւնը մտածել էր հաւաքուել միենոն  
տեղում: Հետևանքն այն եղաւ որ աղմինիսարացիալի  
ներկայացուցիչները ենթարկուեցին տուզանքի: Խնդրո-  
ախնքեան հասկանալի է, որ դատաստանական իշխա-  
նութեան այսպիսի մանրակրկիտ վերաբերմունքը դէպի  
անձնական աղասութիւնը, պարտաւորեցնում է և  
աղմինիսարացիալին, որպէս զի հասարակական ժողովնե-  
րի վերաբերեալ իր ունեցած իրաւունքներից խիստ  
զգուշութեամբ օգտուի և այսպիսով զսպում են  
կամայականութիւն բանեցնելուց:

Իսկ ինչ վերաբերում է Անդիական օրէնսդրու-  
թեան, որ միութիւնների իրաւունքը սահմանափակում է

նրանք ուահմանուած են դեռ ևս Դէորդ Առ-րդի ժա-  
մանակից պարլամենտական ակտերով. որը իւր ոյժը  
պահում է մինչ ներկայ ժամանակ: Այդ ակտերով  
արգելում են 1) այն միութիւնները, որոնք ունեն  
հակառակառաջական նպատակներ. 2) այն միութիւն-  
ները, որոնց անդամները պարտաւորուել են երդումով  
անպայման հնազանդութիւն ցոյց տալ և 3) այն միու-  
թիւնները որոնց անդամները իրարու յատնի չեն: Իսկ  
իրապէս Անդիայում դատական հետազօտութեան ոչ  
մի դէպք չի պատահել որ խախտած լիներ այդ ակտերը,  
թէև նրանք ձևականօրէն մինչև այժմս էլ գոյութիւն  
ունեն: Բոլոր միութիւնները, որոնք չունեն հակա-  
ռակառաջական նպատակներ, նրանք օգտում են  
անսահման աղասութիւնով:

Փրանսիական մեծ յեղափո-  
խութիւնն ծանօթ չէր միութիւնների և ժողովների  
աղասութիւնն հետ: Այդ երկուսն էլ բոլորովին ան-  
համապատասխան կին բացարձակ միահեծանութեան  
այն հաստատակամ ձգտումներին, որը ցոյց էին տալիս  
Փրանսիական թագաւորներ մի քանի դարերի ընթա-  
ցքում: XVIII-րդ դարում, Փրանսիայում տիրում էր մի  
այսպիսի սկզբունք, որ ոչ մի միութիւն և ոչ մի ժողով  
չեն կարող գումարուել առանց թագաւորի կամ ոստիկա-  
նական աստիճանաւորների թողարկութեան: Այն ժա-  
մանակուայ յատնի իրաւաբաններից մէկը — Մերլինը,  
նայում է այդ զրութեամբ ինչպէս «ընդհանուրից

հանաչուած անհերթելի ապացոյցի» (axiome trival):

Մարդու և քաղաքացու իրաւունքի դեկարմացիան 1789 թուին ոչնչացրեց բոլոր սահմանափակութեր, որոնք ճնշում էին քաղաքացիների անձնական ազատութիւնը և այսպիսով ֆրանսիացիք իրաւունք ստացան ազատ հաւաքուելու: Զընայելով գորան, իրաւունքի դեկարմացիան սահմանում է այդ ազատութիւնը միայն կողմանակի կերպով 5-րդ յօդուածով, որը ասում է «այն ամենը, որ չէ արգելուած օրէնքով, չի կարող որ չը թույլատրուի» և նոյնպէս 11-րդ յօդուածով, որ պարունակում է քաղաքացիների իրաւունքների այս ցուցմունքները. «ազատ խօսել, պատասխանառու լինելով միայն այդ ազատութիւնը իշար գործ դնելու դէպքում, նախառաեսնուած է օրէնքով»:

Իսկ ինչ վերաբերում է միութիւնների ազատութեան, պէտք է ասել որ յեղափոխութեան գործիչները առաջին անգամ վերաբերում են թշնամաբար: Միշին գարերը, ամեն տեսակ կորպորացիաների ժաղկելու ժամանակն էր, որոնց մէջ բացակայ լինելով կառավարչական ուժեղ իշխանութիւնը, առանձին անհասները դանում էին անհրաժեշտ օգնութիւն և յենակէտ իրանց իրաւունքների և դործունելութեան համար: Ֆրանսիական վեղափոխութիւն միութեան այդ կազմակերպութիւններին հանդիպեց արգէն այլամբարձան վիճակի մէջ, որոնք աւելի վնաս էին բերում քան թէ օգուտ որովհետեւ նրանք ժառանձակում էին որպէս յենական ամեն

տեսակ մենավաճառութիւնների և արտօնութիւնների: 1789 թ. հիմնադիր ժողովի մէջ չնշուելով վաղեմի կորպորացիաների հին ծեւերը, յեղափոխութեան մասնակցողները ուշադրութիւն չը դարձրին այն ներքին նշանակութեան և կենսական ոյժի վրայ, որ ծածկուած էր այդ արդէն մեռած ծեւերի տակ և իրանց թշնամութիւնը փոխադրեցին ընդհանրապէս ընկերութիւններ կաղմակերպելու վրայ՝ խուսափելով առհասարակ ամեն տեսակ միութիւններ կաղմակերպելու փորձից: Առանձնապէս անհամբերասուր ողի ցոյց առւին ազգային ժողովի գործիչները, որոնք սովորուած էին բուրժուազիայի շահերով՝ բանուորական կազմակերպութիւնների դէմ:

Այսպէս երբ ազգային ժողովին հասան լուրեր, որ փոխադարձ օգնութեան համար կաղմուել է բանուորական միութիւններ և երբ իրանց դիմում էին այդ տեսակ խնդրապերով, նա գաժան կերպով մերժում է նրանց և ընդհանուր կարգադրութեամբ արգելումէ այդ տեսակ միութիւնների կաղմակերպելը, որոնց մէջ նրան երևում էր միշնագարեան կաղմակերպութիւնների ողին: Այդ առութիւ կաղմած արգելող դեկրէար ասում է որ, ժողովրդի ոչ մի դասակարգ չէ կարող կազմակերպել միութիւններ իրանց շահերի պաշտպանութեան համար և այդ նպատակի համար դոցութիւն ունի պետութիւնը:

Միշին 1790 թ. վերջը, շնորհիւ մի մասնաւոր դէպքի օրէնք է դրւում, որով վերականգնուում է,

Ֆրանսիայում, ոչ միայն ժողովների այլ և միութիւնների ազատութիւնը: «Քաղաքացիներ իրաւունք ունեն համախմբություն: Խսաղաղ հանապարհով և իրանցից կազմել ազատ ընկերութիւններ, միայն այն պայմանով, որ ընդհանուր օրէնքներից դուրս չըդան»:

Առաջին անգամ, այդ օրէնքը երևալուց յետոյ, միութիւնների ազատութիւնով խսկապէս օգտում էին բացառապէս յեղափոխական կուսակցութիւններ, որոնք երկիրը պատել էին ակումբների ցանցերով: Կամենալով մի քիչ ասհմանափակել վերջիններիս զործունէութիւնը, որ ժամանակին չափից դուրս յարձակողական դիրք էր բռնել, հիմնադիր ժողովը հրատարակեց 1791 թ. օրէնքը, որով արգելուեց ընկերութիւններն ներկայացնել հաւաքական պետիցիաններ, հրատարակել իրանց գասողութիւնները, հրատիրել իրանց մօտ պաշտօնավար անձանց և հասարակ քաղաքացիներին: Այդ պահանջների խախտողներին օրէնքը սպառնում էր երկու տարով դուրս ծգել լիակատար իրաւունք ունեցող քաղաքացիների ցուցակից:

1793 թուին տերրորի ժադաւորութեան հետ, միութիւնների և ժողովների կազմակերպութեան ազատութիւնը հասաւ իւր գաղաթնակեակին, հրատարակուեց դեկրէտ, որ սպառնում էր այն ոստիկանական ազենափին տասը տարուայ տաժանակիր աշխատանքի, որը կաշխատէր արգելք հանդիսանալ ժողովներին և կրփակէր միութիւնները:

Բայց Կռնիւնտի (ֆր. ազդ. ժողով) ընկնելու

հետ սկսւում է հակառակ պրօցէս, արդէն նոյն 1793 թ. վերջը արգելուեց ակումբները և կանանց ընկերութիւնները և նրա հետն էլ ընկերութիւնների բոլոր նիստերը հրապարակական պիտի դառնալին: 1794 թ. դեկրէտը արգելեց ընկերութիւնների գաշճակցութիւնը և վերահաստատուեց հաւաքական խնդրագրի սարուարգերը: 1795 թ. սահմանադրութիւնով արգելուում էն ամեն տեսակ ընկերութիւնները, որոնք հակառակ էին հասարակական կարգ ու կանոնին:

Սահմանադրութեան բայտարարուելու հետ վերացուեցին բոլոր ակումբները, իսկ 1798 թ. փակուեցին նաև բոլոր քաղաքական կուսակցութիւնները:

Gode Penal 1810 թ. սահմանեց, որ նախ քան ամեն տեսակ ընկերութիւնների հիմնուելը, որոնք կունենան 20 անդամից աւելի և որը կը հաւաքուեն ամեն օր և կամ որոշուած օրերը, անհրաժեշտ է որ ունենան նախապէս թողարկութիւն, բայց և այնպէս փորձը ցոյց տուեց որ օրէնքից կարելի է դուրս գալ: Միութիւններ սկսեցին բաժան-բաժան խմբեր կազմել իւրաքանչիւր 20 հոդուց բարկացած, այդ տեսակ խմբեր կալին հարիւներով և ընկերութեան նիստերին հաւաքուել էին ոչ առաջուց որոշուած օրերին:

1834 թ. հրատարակւում է նոր օրէնք, որով անկարելի էր գառնուած օրէնքից դուրս գալ, որը տեղի էր ունենուած մինչեւ այն ժամանակը, այդ օրէնքը պահանջում էր թողարկութիւն ստանալ և արդ տե-

սակ ընկերութիւնների համար, որոնք հաւաքւում  
էին ոչ ամեն օր և այն օրերում որը առաջուց որո-  
շուած չէին. արդելում էր նաև միութիւնների միա-  
ցումը: Այդ օրէնքը գոյութիւն պահպանեց մինչև  
1848թ.

Երկրորդ հասարակապետութիւնը վերաբերեց  
ժողովների և միութիւնների ազատութիւնը, բայց  
1852 թուին Նապոլէոն III-րդի թագաւորութեան  
ժամանակ այդ ազատութիւնը նորից չնշուեցաւ և  
օրէնքը հրատարակուեց որ անպայման արդելում էր  
ամեն տեսակ քաղաքական միութիւններ, այնէ ինչ-  
պէս գաղտնի, նոյնպէս յայտնի գոյութիւն ունեցող-  
ները, ինչպէս և ակումբները և հասարակական ժո-  
ղովներ:

Նապոլէոն III-րդի թագաւորութեան վերջին  
տարիների աւելի ու աւելի ազատամիտ ուղղու-  
թիւնը արտափայլեց իմիջի ալոց ժողովների ու միու-  
թիւնների իրաւունքի վերայ: Այն ժողովների համար,  
որոնք հաւաքւում էին քննելու քաղաքական և կրօ-  
նական հարցերը պահանջում էր կառավարութեան  
նախնական թույլուութիւնը, իսկ միւս ժողովների  
համար ինչպէս և ընտրողների համար պահանջում  
էր միայն կանխաւ յախտարարութիւն տալ, ժողովից  
3 օր առաջ, նշանակելով տեղը ժողովելու ժամանա-  
կը և նոյնպէս նրա պարագմունքի առաջկան 7 հոգու-  
ստորագրութեամբ, որոնք բնակութիւն պիտի ունե-  
նալին այն համայնքի շրջանում, որտեղ նախատեսնուում

էր ժողով գումարելը: Ժողովը պիտի լինէր անպատ-  
ճառ ոչ բացօթեայ և պիտի ունենար բիւրօ, որի  
վրայ ընկնում էր կարդ ու կանոն պահպանելու պա-  
տասխանատուութիւնը:

1881 թուին հրատարակուեց նոր օրէնքը, ո-  
րով աւելի էր հեշտանում ժողովների իրաւունքը:  
Այդ օրէնքի համաձայն հրապարակական ժողովը ա-  
զատում էր նախնական թույլուութիւնից, պա-  
հանջւումէր միայն 24 ժամ ժողով սկսելուց առաջ  
ձանուցանել երկու քաղաքացու ստորագրութիւնով.  
Ժողովները չը պիտի կազմուեն փողոցներում կամ հա-  
սարակական հանապարհի վրայ (Sur le Voie pub-  
lique) բայց և չէր պահանջւում որ նրանք լինեն  
անպատճառ ոչ բացօթեայ: Ժողովը պիտի ունենայ  
բիւրօ երեք անդամից բաղկացած, որոնք պիտի լի-  
նեն կարդ ու կանոնի պատասխանատու: Կառավա-  
րութեան կազմի կողմից կարող է ուղարկուել, ժո-  
ղովին մասնակցելու համար ազմինիսարական կամ գա-  
տաստանական որե. Է պաշտօնական անձ: Այդ ան-  
ձը ունի իրաւունք փակել ժողով երկու գէպ-  
քում 1) բիւրոյի պահանջմանը և 2) իրար ժե-  
մելու գէպքում: Ինչպիսի հատերն էլ որ խօսուէր  
ժողովի մէջ, ինչպիսի յանածե որ ընդունուէր աղ-  
մինիսարական իշխանութիւնը իրաւունք չունէր փա-  
կել նրան: 1881 թ., օրէնքը ժողովների վերաբերեալ  
իր ոյթը պահպանում է և ներկայումս: Իսկ ինչ վե-  
րաբերում է միութիւնների իրաւունքներին, նա զե-

կավարւում էր 1834 թ. օրէնքով մինչ 1891 թ., երբ հրատարակւում է նոր օրէնքը միութիւնների մասին, որով զգալի կերպով հետանում է ամեն տեսակ միութիւնների կազմելը, բայցի կրօնականից: Այդ օրէնքի հութիւնը այս էր, որ ամեն միութիւն, որը իրաւաբանական անծի իրաւունք չէ որոնում, կարող է ազատ գոյութիւն ունենալ, առանց կառավարութեան գիտութեան և մինչեւ անդամ առանց յայանելու: Եթէ միութիւնը կամենում է ունենալ իրաւաբանական անծի իրաւունք (ունենալ կայք, գատավորութիւն անել և այլն) այն ժամանակ պիտի ժանուցանի իւր գոյութեան մասին: Բայց և այնպէս այդ տեսակ միութիւնների իրաւունքը բաւական սահմանափակ է, նա իրաւունք ունի պահանջ յայտանելու գատարանում, անդամապնար ժողովելու: անշարժ կայք կարող է ունենալ միայն այն չափով, որքան անհրաժեշտ է իրականացնելու իւր նպատակները, հող ունենալ չէ կարող, ինչպէս և կասակածը ընդունել:

Բայց կարող է լինել միութեան երրորդ խուժը ևս, այդ այն միութիւններն են, որոնք հանրօգուտ բնաւորութիւն ունին: Միութիւն համրօգուտ ճանաչում է զիկրէտ սև անալու միջոցով: Նա տալիս է առանձին իրաւունքներ, օր. ժառանգութիւն ստանալու իրաւունք, բայց և այնպէս անշարժ կաքերի տիրապետութիւնը թուլատրում է այնքան, որքան որ այդ անհրաժեշտ է միութեան նպատակներ իրագործելու համար: Կրօնական միութիւնները այդ

օրէնքին չեն ենթարկեում: Որովհետեւ նրանք ֆրանսիայում ձեռք էին բերել ահազին հարստութիւն և ընարողների վերայ իրանց ունեցած ազգեցութեան շնորհիւ, նաև քաղաքական դործիչների կաշառառութեան, նրանք խոշոր քաղաքական ոյժ էին կազմում, որ թշնամի էր հանրապետական կազմին, օրէնքը ձրվածում էր սահմանափակել նրանց աղատութիւնը: 1901 թուից կիօնական միարանութիւնները կարող են հիմնուել միմիայն օրէնքի թոյլատուութեամբ, իսկ արդէն գոյութիւն ունեցող միարանութիւնները պէտք է միջնորդեն հրատարակել ապու բայցառիկ օրէնքը, որով ճանաչուի իրենց գոյութիւնը: Այն կայքը որ չէ թուլատրում միարանութեան ունենալ, վերագրածնուում է նուիրատուին կամ գործադրուում է այնպատակների համար, իսկ ինքը վերչայնում է իւր գոյութիւնը:

Գերմանիայում, միշին գարերում միութիւնների և ժողովների իրաւունքը չէր ենթարկեում որևէ էնշման ու միութեան կազմակերպութիւնները զարգացած էին լայն կերպով: XVII-րդ դարում օրէնքով արգելուեց միայն այն ընկերութիւնները, որոնք հետեւում էին ակնյալունի կերպով հակաօրինական և անթուլատրելի նպատակներին: Բայց ժամանակի ընթացքում իրաւաբանների աղղեցութեան շնորհիւ, որոնք ուսումնական էին համար, հետզհետէ երևում են միութիւնների աղատութեան սահմանափակումներ. զործ է դրւում

պէս էլ՝ ճանաչուեց առանձին թագաւորութիւնների սահմանադրութեան մէջ Այդ վերջինները ընդունում էին սկզբունքով՝ որ հպատակները իրաւունք ունեն հաւաքուել և կազմել միութիւններ առանց կառավարութեան նախնական թույլտութեան, միայն առանձին օրէնքներով պիտի սահմանու էին ժողովների և միութիւնների ազատութեան սահմանափակումները և որոշուեր իշխանութեան իրաւասութեան սահմանը երկու կողմի համար։ Մինչև այսօր ընդհանուր կայսրութեան օրէնք չկայ ժողովների և միութիւնների մասին և նրանց կազմերու կարգը և գործունէութիւնը զեկավարում է ամեն առանձին թագաւորութեան մէջ առանձին օրէնքներով։

Ընդհանուր կանոնադրութեամբ, Գերմանիայում միութիւնների կազմակերպութիւնը ազատ է և զրահամար չէ պահնանջում կառավարութեան նախնական թույլտութիւնը։ Քաղաքական միութիւնների աւելի էական սահմանափակումը, որ ընդհանուր է բոլոր գերմանական թագաւորութիւնների մէջ, հետևեան են։ Միութիւնների կազմակերպութիւնները պարտաւոր են երեք օրուայ ընթացքում ներկայացնել տեղական ոստիկանական իշխանութեան միութիւնն կամոնադրութիւնը։ և նրանց անդամների ցուցակը կամ համառակ գէպօւմ բիւրօյի անդամների։ Միութիւնները չը պիտի ընդունեն իրանց անդամների շարքում։ Կանանց, դպրոցների աշակերտներին, անչափահանաներին, արտօնութիւն չունեցողներին և պինուորականներին։ Միութիւններին չէ թույլատրում իրար հետ միանա-

այն թէօրիան, որով համարւում էին ապօրինի բոլոր այն միութիւնները որոնք չունեին գոյութիւն ունենալու ուղղակի թույլատրութիւն։ Բայց իրականութեան մէջ, այդ թէօրիալի գործադրութիւնը մեղմանում էր, որովհետեւ լուեւեան տուած թույլատրութիւնը լանախ հաւասարւում էր ուղղակի թույլատրութեան։

XVII և XVIII դարերում միութիւնների ազատութիւնը ենթարկում է նոր սահմանափակումների։ Սկսած 1794 թուից, Պրուսիայում, կառավարութիւնը սահմանում է իրաւունքը արգելել վարչական ճանապարհով ամեն տեսակ միութիւններ, իսկ օրէնսդրական կարգով արգելուեցին այն միութիւնները, որոնց նպատակը հակառակ էր հասարակական խաղաղութեան և ապահովութեան կարգ ու կանոնին։

Մի փոքր յետոյ, Փրանսիական յեղափոխութեան դէպերի ազդեցութեամբ, այդ արգելքը տարածուեց և քաղաքական բոլոր միութիւնների վրայ. իսկ ինչ վերաբերում է, այն միութիւններին, որոնք ունեին տնտեսական, գիտական և համախական կացութեան նպատակ, նրանց կազմակերպուելը, վերմանափակն շատ թագաւորութիւնների մէջ թույլատրում էր, առանց ոստիկանական թույլտութեան։

1848 թուին Գերմանիայում հանաչուեց օրէնսդրական ճանապարհով ժողովների և միութիւնների ազատութիւնը։ Այդ ազատութիւնը ընդունուեց, ինչպէս հիմնական իրաւունք գերման ժողովրդի, նոյն-

լու և կազմելու մի բնդհանուր կազմակերպութիւն։ Այդ պատուերը չը կատարողները և ենթարկուում են պատժի։ Ոչ քաղաքական միութիւնները, աղաս և սահմանսփակումներից, թէև մի քանի թագաւորութեան մէջ, օրինակ Քաւարիակում, պահանջուում է ասալ տեղական ոստիկանութեան ծանուցումը։

Մի քանի դէպքերում կառավարութիւնը իրաւունք ունի արգելելու միութիւններ։ Այս հանգամանքում գերմանական զանազան տէրութիւնների մէջ օրէնսդրութիւնը տարբեր է։ Պրուսիայում ոստիկանական հաստատութիւնները իրաւունք ունեն միայն կանխապէս փակել միութիւնը, իսկ վերջնական արգելումը կարող է լինել միայն դատաստանով։ Բաղէնի օրէնսդրութիւնը տալիս է իրաւունք ոստիկանական հաստատութիւններին պահանջել տեղեկութիւն գոյութիւն ունեցող միութիւնների մասին, բայց չէ սահմանում նոխնական ծանուցման անհրաժեշտութիւն։ Ներքին դործոց մինխոտրութիւնը կարող է արգելել այն միութիւնները, որոնք հակակառավարչական կը լինին կամ բարողականութեան դէմ և կը սպառնան պետք թեան և հասարակական ապահովութեանը։ Վերտեսներդի թագաւորութեան մէջ արգելելու իրաւունքը չէ սահմանուած օրէնսդրական հանապարհով, բայց իրականութեան մէջ այդ թողարկում է միայն այն դէպքում, երբ միութիւնը ձրդտում է հակակառավարչական նպատակներին կամ հրաժարւում է ներկայացնել իւր կանոնադրութիւնը։

Աղաս ժողովի վերաբերեալ հիմնական օրէնքի

Ց-րդ յօդուածք պառամ է։ գերմանացիքիրառունք ունեն խաղաղ հանապարհով հաւաքութելու և միայն առանց զէնքի, դրա համար չէ պահանջուում առանձին թողարկութիւն։

Հասարակական բացօթեայ ժողովները կարող են արգելուել, այն դէպքում եթէ որ հասարակական կարգն ու կանոնին և խաղաղութեանը սպառնում է վտանգ։ Այդ օրէնքը իւր ոյժը պահպանում է ներկայումս էլ։

Ժողովների իրաւունքի վերաբերեալ օրէնսդրական սահմանափակութիւնը արտադատուում են այսպէս։ Այստեղ ներկայ եղողները չը պիտի լինին զինուած, ժողովի մէջ երբ քննադատում են քաղաքական հարցերը, չը պիտի մասնակցէն դինուորականները. քաղաքական ժողովների մասին յայտնուում է տեղական իշխանութեան ոչ ուշ քան 24 ժամ բանալուց առաջ։ Բայտիկանական հաստատութիւններին տրւած է իրաւունք ուղարկել իւր ներկայացուցչին այդ տեսակ ժողովներում։ Վերջինս կարող է արձակել ժողովը այն դէպքում երբ անկարգ բնաւորութիւն է ընդունում։ Արձակումը արտադատուում է «ցրուեցէք» հրամանով և այդ հրամանը պէտք է կատարուի անպայման։ Հրամանին չը հնազանդուելուն հետեւում է տուգանք։ Տարկաւոր դէպքում կարող է գործադրուել և զինուորական ոյժը։ Բացօթեայ ժողովներ կարող են կազմուել միայն ոստիկանական թողարկութիւնով և այդ չեն թողարկուում թագաւորի բնակութեան սահմանից յախոնի հեռաւորու-

թեան վրայ, ինչպէս և օրէնսդրական պալտափ և  
նրա նստաշրջանների ժամանակ:

Հին Ռուսիայում „ուգելնօ մէշեալօ“ \*)  
(յծըլիո-Ենչեւացո)՝ի շրջանում համախական ժողո-  
վութը, ոչ միայն օգտում էին ազատութիւնով, այլ  
և խաղում էին ժողովրդի կեանքի մէջ քաղաքական  
ամենամեծ ֆակտորի դերը:

Իշխանական տիրապետութեան ուժեղանալու  
և Մոսկովիան թագաւորութեան զարգացման հետ  
աւելի ու աւելի դժուարութեամբ էր հնչում մէշէի  
զանդի ծանր ինչպէս և դժուարութեամբ էր լուսում  
ժողովրդի բաղադր ծայնը՝ իւր կարիքների մասին:  
Ամեն մի համախմբումը, ամեն մի ինդրագիր տալը  
կամաց կամաց ժողովրդին մօտեցնում էր ապստամբ-  
ների շարքին և այդ համարում էր հակաօրինակա-  
կան վարմունք, որ ոչ մի դէպքում չէր կարող հան-  
դուրժելի լինել բարեկարգ թագաւորութեան մէջ:

Ալքսէ Միխայլովիչ թագաւորի օրէնքը, սահ-  
մանեց զիստաել ռառանց խղճալու նրանց, ովքեր  
ինքնազիսութիւնով, համախմբումներով և դաւադրու-  
թեան նպատակով կը զան՝ նորին արքայական մե-  
ծութեան մօտ, նրա բոլեարների և օկոնիչների \*\*)

\*) Հին Ռուս քաղաքացիների կարևոր գործերի  
առթիւ գումարուող համայնական խորհուրդ:

\*\*) Ռուսաց հին թագաւորների բ. կարգի պաշ-  
տոննեաները, որոնք նախկին թագաւորների հետեւող-  
ներն էին:

վրայ և բոլերական դումայի անդամների, մօսիկ մարդ-  
կանց, հրամանատարների և պաշտօնակար անձնաց  
վրայ):

XVIII-րդ դարի ընթացքում բազմիցս կրկնուում  
էր զանազան կանոնադրութիւնների ու հրամանների  
ձևով այն հաստատուն վճիռը, որ չը թողնել հա-  
սարակական կարծիքի բացարձակ արտապայտութիւնը:  
«Ով որ կասկածելի համախմբում կազմէ, ասում է  
բարեկարգութեան կանոնի 272-րդ յօդ:—«Նրան կա-  
լանաւորել և յանձնել դատաստանին»: Նոյն կանոնա-  
դրութեան 230-րդ յօդ: հրամայում է արգելք հան-  
դիսանալ այն քրէական յանցանքին «որոնք հակառակ  
են հաստրակական խաղաղութեան» և այդ առթիւ-  
ի թիւս այդ տեսակ յանցանքների ցոյց է արւած  
«կասկածելի համախմբումներ»:

1769 և 1771 թուի հրամաններում ասւում են  
«պինդ փակեցէք զանգակատան մուտքերը, բանալիքնե-  
րին զգուշութեամբ հսկեցէք», որով գարձեալ ար-  
տապայտում է զանգահարութեան սարսափի (նա-  
րասա) երկիւղը կամ մէշէ ժողովների վախր:

Այդ երկիւղը պահպանուեց շարունակ մինչև վեր-  
շին տարիները: Խուսաց օրէնքը մինչև վերջին ժամանակ-  
ները բացարձակապէս արգելում էր խորհրդակցու-  
թեան և գործունեութեան վերաբերեալ խմբումներն ու  
ժողովները, որ հակառակ է ընդհանուր խաղաղութեան  
և հանգստութեան», և նոյնպէս ինդրագրերի և զե-  
կուցագրերի մատուցումը խմբովին կամ դաւադրու-  
թեան մոքով: «Ժողովուրդը երբոր հաւաքուեն և ան-

կարգ ու աղմկալի ժողով կազմեն, ոստիկանութիւնը պարտաւոր է ստիպի որ ցրիւ գան իրանց տները և հարկաւոր դէպքում էլ կարող է կանչուել զօրքը, ասում է կանոնադրութեան 112 և 113-րդ յօդ. նախազգուշացնելու և յանցանքի առաջն առնելու մասին խօսելիս Եւ չը նայելով այն բանին որ արգելում էր միայն այն ժողովը և գործունէութիւնը որ «ընդհանուր խաղաղութեան հակառակ էր», այդ հասկացողութիւնը—«ընդհանուր խաղաղութեան և հանգստութեան» Որուսաստանում երեւում է այնքան ընդարձակուած ալմինիստրացիակի անկանարու տիրապետութեան ծեռքում, որ ոչ մի ամենասամեղ հրապարակական արտասանած ճառ և ոչ իսկ պարզ զիտական, ժողովրդական դասախոսութիւններ չեն կարող կազմուել առանց նախնական թուլառութեան, որը միշտ հնարաւոր չէր ծեռք բերել:

Մի թիւնների պատմութիւնը Որուսաստանում ներկայացնում է աւելի տխուր պատկեր, բացի արդիւնաբերական և վաճառականական ընկերակցութիւններից, որոնք կատարել են կառավարութեան վերաբերմամբ ժառանական դեր. Որուսաստանը չէր իմանում հասարակական ինքնազործունէութեան որևէ ուրիշ արտայատութիւն մինչև XVIII դարի վերջը: Եկատերինէի թագաւորութեան ժամանակ առաջ են գալիս զիտական և մասսօնական \*) ընկերութիւն-

\*) Մասսօն նշ. անգամ գաղտնի ընկերութեան որոնք ունէին իրանց խորհրդաւոր ծէսերն և արարողութիւնները և ձգտում էին բարոյական կատարելու թեան հասնել:

ներ: Այդ իսկ ժամանակներին է վերաբերում և կառավարութեան առաջին օրէնսդրական փորձ անելը, բարեկարգելու ընկերութիւնների գործունէութիւնը:

Բարեկարգութեան կանոնադրութիւնը 1782 թ. զանազանում է ընկերութիւնները, «օրէնքով հաստատուածներ», այսինքն կառավարութիւնից թողարուածներ և գաղտնի ընկերութիւններ, այսինքն չը թողարուածներ: Առաջիններին ոստիկանութիւնը պիտի ամեն տեսակ պահպանութիւն և հովանառութիւն ցոյց տար, իսկ երկրորդներին պարտաւոր էին վերացնելու և վերչը տալու նրանց գործունէութիւնը:

XIX դարի սկզբում կառավարութիւնը աշակցում է ընկերութիւնների, հիմնուելուն և ներողամտաբար էր վերաբերում ոչ պաշտօնական ընկերութիւններին: Բայց Ալեքսանդր I թագաւորութեան վերջը, կառավարութեան վերաբերմունքը դէպի ոչ պաշտօնական ընկերութիւնները փոփոխում է. 1822 թ. հրովարտակով հրամակում է փակել բոլոր գաղտնի ընկերութիւնները և չը թողարել նրանց պաղպայում ևս, իսկ բոլոր ժառանողներին էլ ստորագրութեամբ պարտաւորեցնել, որ նրանք ոչ մի գաղտնի ընկերութեան չպատկանեն:

Այդ ժամանակից Որուսաց օրէնսդրութիւնը դարձնում է առանձին ուշադրութիւն «ապօրինի ընկերակցութիւնների» վրայ, որոնք ենթարկում են արգելումների «գատասատանի երկիւղով և օրէնքների բոլոր խստութեան պատասխանատութեամբ»:

Բոլոր իշխանութիւններին և ոստիկանութեան կարգադրում է առանց աչքաթող անկյու հսկել, որ ոչ մի տեղ և ոչ մի պատրուակով այդ տեսակ ընկերութիւնները չը հիմնուեն»:

Այդ հասկացողութեամբ «ապօրինի ընկերակցութիւններ» որ վերին աստիճանի անորոշ էին, գործնականապէս դարձան չափազանց առածգական:

Իսկ ինչ վերաբերում է արդիւնաբերական, գիտական, բարեգործական և այլ ընկերութիւններին նրանց հիմնուելը կախումն ուներ նախնական թույտութիւնից: Ամեն մի ընկերութիւն թույտութիւն ստանալու համար պիտի ներկայացներ կառավարութեան բարեկայեցողութեան (սովորաբար ներքին գործոց միջիստրութեան) իւր կանոնադրութիւնը, որտեղ պէտք է մանրամասն ցոյց տուած լիներ ինչպէս ընկերութեան նպատակը, նոյնպէս էլ նրա կաղմակերպութիւնը և գործունելութեան կարգը:

Ինչպիսի խիստ հակադրութիւն հասարակական կարծիքների աղմկալի արտայալտութեան և լայն կերպով զարգացած Անդիմյի հասարակական ինքնագործունելութեան մէջ և այն գերեզմանական լուսութեան և սառն յարաբերութեան դէպի ամեն տեսակ հասարակական գործը, որը այլպէս տեսական կերպով և դժուարութեամբ մշակում էր Ռուսաստանում կառավարութեան ձեռքով: Բացարձակ միահեծանութեան երկաթեալ ձեռքը ճնշում էր ամբողջ զարերի ընթացքում ամեն տեսակ հասարակական միտքը, հասարակական կարծիքների ամեն տեսակ արտայալտութիւնները և նախաձեռնութիւնները:

Հարկաւոր էր ճակատագրի ծանր հարուածներ, հարկաւոր էր երկրի անտեսական և քաղաքական կեանքի քայլացումը, որպէս զի հասարակական ոչի հզօր հեղեղասը խորտակէր բոլոր արհեստական թմբերը, այն քարեալ պատերը, որոնց մէջ գարերով շարունակ խեղդւում էր ինքնագործունելութեան կենդանարար մկրնասորութիւնը, որ անհրաժեշտ է ամեն ժողովրդի կանոնաւոր անձան և զարգացման համար:

Վերջին տարիների ամեն տեսակ ընկերութիւնների ձեռնարկութեան անսովոր արագ աճումը և ժողովների բաղմութիւնը, ժառայում են որպէս նրա անհերքելի ասացոյց, որ Ռուսաստանի հասարակական ոչի գարթնել են, և նրանց նուանած ժողովների և միութիւնների իրաւունքները, նրանցից այլևս չի կարելի խել:

Ներկայումս ժողովների և միութիւնների գործունելութիւնը ղեկավարում է 1906 թուի Մարտի 4-ի ժամանակաւոր օրէնքներով: Այդ օրէնքներով սահմանում է ընկերութիւնների և ժողովների բացման համար ժանուցողական կարգը, բայց նրա հետն էլ մտցնում է մի ամբողջ շարք սահմանափակումներ: Արդեւում են այն ընկերութիւններ, որոնք ունեն նպատակ, ընդդեմ հասարակական բարոյականութեան կամ սպառնում է հասարակական անդորրութեան և ապահովութեան և կառավարում է որևէ հաստատութեան կամ այն անհատների ձեռքով, որոնք զրտնում են արտասահմանում, ու ունեն քաղաքական

նպասակներ: Այն ժառայողները, նոյն իսկ եթէ ազատ կամքով են փարձուած, և ժառայում են կառավարչական հաստատութիւնների մէջ կամ արքունական ու մասնաւոր երկաթուղու ճանապարհներին, կամ հեռախօսի հիմնարկութեան մէջ, զրկուած են իրանց մէջ ընկերութիւններ կազմելու իրաւունքից՝ ժանուցողական կարգով:

Նրանց ընկերութեան կանոնադրութիւնը պիտի նախապէս հաստատուի իշխանութիւնից և չը պիտի ունենան քաղաքական նպատակներ և կամ հակառակ լինեն իրանց ժառայութեան պարտաւորութիւններին, պայմաններին և գոյութիւն ունեցող կարգերին: Մառայողների ընկերութիւն կազմելը իրանց շրջանից դուրս և այդ սեսակ ընկերութիւնների մէջ մասնակցելը կարող է պատահել որ արգելուի իրանց իշխանութիւնից, եթէ որ կը ճանաչուի անհամապատասխան իրանց պաշտօնի նրկատմամբ: Ընկերութիւնների և միութիւնների գործերի վրայ հսկելու համար սահմանում է ընկերութիւնների գործեր վարելու վերաբերեալ նահանգական կամ շրջանային ատեան: Այն անձինք որոնք կամենում են կազմել ընկերութիւնը, ներկայացնում են այդ մասին խնդրագիր նահանգապետին կամ քաղաքապետին, որ եթէ իւր կողմից ոչ մի արգելք չէ գտնում ընկերութիւն կազմելու համար, յանձնում է խնդրագիրը զննութեան համար նահանգական կամ քաղաքապետին ընկերութիւնների վերաբերեալ առենին: Եթէ երկու շաբաթուայ ընթացքում չի մերժուի,

ընկերութիւնը կտրող է սկսել իւր գործունէութիւնը: Ընկերութիւններ, որոնք կամենում են ունենալ իրաւաբանական անձ ունենալու իրաւունքը, պյսինքն կայքը ձեռք բերելու, զրամագրութիւն ստեղծելու, պահանջ յալտնելու և պատասխանելու դատարաններում և այլն. պիտի ունենան կանոնաւոր կազմած ցուցակ առանձին կանոնադրութեան հիման վրայ և կարող է օգտուել իրանց իրաւունքներով միայն առանձին մատեանում մուծելուց յետոյ: Եթէ ընկերութեան գործունէութիւնը սպառնում է հասարակական ապահովութեան և անդորրութեան և ընդունում է պարզ անբարոյական ուղղութիւն, նահանգապետը կամ քաղաքապետը իրաւունք ունի ընդհատել ընկերութեան գործունէութիւնը, իսկ նրա վակելը կախուած է նահանգական կամ գաւառական ընկերութիւնների գործեր վարող ատեանից: Վերջիներիս տեսչութեան են ենթարկելում նոյնպէս արհեստակցական միութիւնները, միայն այն զանազանութեամբ որ արհեստակցական միութիւն կազմելու համար առւած խնդրագիրը կամունադրութեան ծրագրի հետ անցնում է մէկ աւելորդ ինստացիա, նա պիտի նախ և առաջ յանձնուի գործարանական աւագ տեսչին կամ շրջանային լեռնային նարտարապետին, որը յետոյ արդէն յանձնում է նրան նահանգապետին կամ քաղաքապետին:

Օրէնքը որ որոշում է ժողովի գործունէութիւնը, առաջին անգամ հրատարակուեց 1905 թուի Հոկտեմբերի 12-ին, այն ժամանակ երբ ազատ խօսքը արդէն լայնածաւալ ալիքներով հեղեղում էր ամ-

լողա Ռուսաստանը, զրաւելով իւր հոսանքի մէջ թթ-  
նակչութեան բոլոր գասակարգերը:

Այդ կանոնները դարձրին ժողովները օրինական,  
որը մինչև այն ժամանակ օրէնքից դուրս էր դոր-  
ծում, աշխատելով միւնոն ժամանակ նրանց ազա-  
տութիւնը էական սահմանափակումների ներքոյ դնել:

Մէակցիան, որ չոկտեմբերի 17-ի մանիֆէստով  
տուած ազատութիւնը խեղդեց արեան հեղեղներով,  
լուեցրեց առ ժամանակ ժողովրդի ծախը, բայց նրա-  
նից խլել նուած իրաւունքները այնուամենայնիւ-  
չը կարողացաւ: Ժողովների իրաւունքը նորից հաս-  
տառուեց 1906 թ. Մարտի 4-ի ժամանաւոր օրէնք-  
ներով, այս անգամ՝ Պետական Խորհրդի գիտութեամբ  
Այդ օրէնքը կանոնաւորում է հասարական ժողովնե-  
րի գործունէութիւնը, համարելով հասարակական ժողով  
այն, որ մատչելի է թէ անորոշ և թէ որոշ թուով  
անձանց, բայց անզատ ժողովի կաղմակերպողների հա-  
մար: Հասարակական ժողովներ կարելի է կաղմել  
երբ նրա մասին խնդիր կը մատուցուի տեղական ու-  
տիկանութեան կառավարչին ժողովի բացումից երեք  
օր առաջ: Խնդրի մէջ ցոյց տուած պիտի լինի ժո-  
ղով դումարելու նիշա որոշած օրը, ժամը, տեղը և  
սպարապունքի առարկաները, ինչպէս և կաղմակեր-  
պողների և դեկուցամողների անունը, հայրանունը և  
ազգանունը, եթէ որ ազգախիները լինելու են:

Ժողովին չեն թոյլատրուի մտնելու դինուած  
անձնաւորութիւններին, նոյնպէս տարրական և միշ-  
նակարգ դպրոցների աշակերտներին: Նահանգապետին  
կամ աեղական սատիկանութեան կառավարչին իրա-

ւունք է տրւում նշանակել ժողովին մասնակցելու  
հոտմար իւր պաշտօնական ներկայացուցիչ: Ժողովի  
մէջ կարդի ու կանոնի հակադութիւնը դրւում է  
կազմակերպողների կամ նախագահի վրայ: Այն անձը,  
որ պատասխանատու է ժողովի կարգին ու կանոնին,  
նա երկու անգամ նախազգուշացնելուց յետոյ պար-  
տաւոր է փակել ժողովը: 1) Երբ նա շեղւում է  
ծրագրի սահմանից 2) Երբ արտապայտում է այնպիսի  
հայացքներ, որ բնակչութեան մէկ մասին կարող է  
լարել միւսի դէմ: 3) Երբ ժողովի մէջ առանց  
թոյլատրութեան դրամ են հատաքում 4) Երբ մաս-  
նակցում են այնպիսի մարդիկ, որոնք իրաւունք չու-  
նեն մասնակցելու և 5) Երբ ժողովը սպառնում է  
հասարակական խաղաղութեան և հանգստութեան:  
Այդ պայմանների մէջ, պաշտօնական անձը, որ ժո-  
ղովին ներկայ է լինում, պահանջում է նրա փակու-  
մը և երկու անգամ նախազգուշացնելուց յետոյ, փա-  
կում է ժողովը իւր իշխանութեամբ: Փակելուց յե-  
տոյ ժողովի մասնակցողները պիտի ցըլւ գան, իսկ չը  
հնազանդուելու գէպքում նրանց հեռացնում են ոս-  
տիկանութեան միջոցով: Բացօթեալ ժողովը թոյ-  
լատրում է միան նահանգապետի կամ տեղական ոս-  
տիկանութեան կուսակարչի թոյլատրութեամբ:

Հասարակական ժողովների գումարելը փակ ար-  
ներում կէս վերստ, իսկ բացօթեալ 2 վերստ հեռա-  
ւորութեամբ Կալսեր արքունիքից կամ Պետական  
Խորհրդի ու Թումայի շինութիւններից, նրանց նրա-  
ստացչանների ժամանակ չէ թոյլատրում:

ինչպէս մենք աեսնում ենք Մարտի 4-ին տու-  
ած կանոնը ժողովի վերաբերեալ վերցրած է գերմա-  
նական օրինակից, բայց նորա հետոն էլ աղատութեան  
սահմանափակումը աւելի առաջ է տարուած: Իսկ  
զործադրութեան ժամանակ զանազանութիւնը այն  
աղատ ժողովների մէջ, որ իրը թէ ներկա-  
լումս դոլութիւն ունեն Ռուսաստանում և այն  
որ արդէն սահմանուած են արևմտեան Եւրոպայի  
միւս պետութիւնների մէջ՝ աւելի մեծ է: Սա բացա-  
տրում է, ինարկէ նրանով որ Ռուսաց աղմինիս-  
արացիան այնքան առզորուած է կամացականութեամբ  
և անհամբերատարութեամբ դէպի աղատ խօսքը,  
որ ոչ մի հակում չափաւորութեսմք և արդարու-  
թեամբ օգտուելու veto-ի իրաւունքից չէ էլ կարելի  
սպասել նրանցից: Որպէս զի իրաւունք ստանան ա-  
ղատ խօսելու իրանց կարիքների մասին, անհրաժեշտ  
է որ աղմինիստրացիան սանձահարուի, և պատաս-  
խանատու լինի իւր դործունէութեան համար, որ-  
պէս զի ժողովների փակումը կախում չունենայ ոս-  
տիկանական կիսակիրթ ժառանգի հայեցողութիւ-  
նից, որ երբեմն և ոչ կարողանում է հասկանալ այն  
ինչ որ կատարուում է նրա առաջ, և թէ ժողովի  
փակումը առանց լուրջ անհրաժեշտութեան չը քա-  
ջալէրուի:

Ժողովների և միութիւնների խական աղատու-  
թիւնը մեզ կ'տայ միան ժողովրդական ներկա-  
յացուցիչներ և այն ժամանակ միութեան կազմակեր-  
պութիւնները և հասարակական ժողովները, որը  
մինչև այժմս մեղ, Ռուսաստանի քաղաքացիներիս,  
այնքան խորթ էր, կ'դառնայ մեր երկրի կեանքում  
ևս նոյնպիսի խոշոր և անհրաժեշտ գործութիւնները  
պէս որ նրանք արդէն զատել են այս ժամանակական



35. 569

ԳԻՆԻ Է 10 ԿՈՊԵԿ

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճաներին և թարգ-  
մանչին Տիֆլիսъ, Багратионовская ул., Мес-  
хіевскій пер., 3, Конст. Априлянъ.